

ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

Տ. ԱՂԱՍ ԶԱՆԼԱ ՄԱԿԱՐՅԱՆ

«ՋԻ ՈՒՐ ԳԷՇՆ ԻՅԷ, ԱՆԴՐ ԺՈՂՈՎԵՍՅԻՆ ԱՐԾՈՒԻՔ»

(Աստվածաշնչի թարգմանությունների մասին)

Անգղի և արծիվ՝ այս երկու թռչունների կենսաձևի մասին տեղեկություններ իմանալն օգնում է հին և նորկտակարանյան որոշ համարների լուսաբանմանը՝ բացահայտելով մի քանի խոսքերում ամփոփված իմաստային տարբեր մոտեցումները։ Այս իմաստով ուշադրության արժանի է Մատթեոսի Ավետարանի ԻԴ գլխի 28-րդ տողը, որի համապատասխան հատվածը կա Ղուկասի Ավետարանում (ԺԷ 37), որի հետ հարաբերվող մախադասություններ կան մասնավորապես Հովհաննիսի (Հով ԼԹ 27-30)։

Ավետարանի հիշյալ համարը ներկայացնում է հետևյալ խորհրդավոր մախադասությունը. «Ջի ուր գեշն իյցէ, անդր ժողովեսցին արծուիք» (ուր որ դիակն է, այնտեղ կհավաքվեն արծիվները)։ Հետաքրքիր ճանապարհ է սակայն անցել այս մախադասությունը տարբեր թարգմանությունների միջով, որի ընթացքում թռչունների արքա արծիվն աստիճանաբար ասես կորցրել է իր գործունեությունը և վերածվել է մի գիշակեր անգղի։

Ջարմանալի է՝ բոլոր հին հրատարակություններում այս մախադասության մեջ *արծիվ* բառն է իշխում, սակայն որքան առաջանում ենք դեպի մեր ժամանակների նորագույն հրատարակությունները, տեսնում ենք, որ դրանցում մեզ հետաքրքրող մախադասության մեջ *արծիվ* փոխարեն ներկայանում է *անգղ* բառը։ Այսպիսին է պատկերը ոչ միայն վերջերս հրատարակված հայալեզու Ավետարաններում, այլև Աստվածաշնչի և Ավետարանների օտար լեզուներով նորագույն հրատարակություններում։

Վերջիններս թեև *անգղ* բառն են մախընտրել (անգլերենում՝ vulture, ֆրանսերենում՝ vautour), Ավետարանի այս հատվածում, սակայն, *արծիվը* պահպանել են ռուսերեն նորագույն հրատարակությունները։ Այսպես է թարգմանված մասնավորապես Աստվածաշնչում։

ՔՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՐԻ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԱՐԾՎԻ ՎԵՐԱԲԵՐԾԱԼ

Քսաներորդ դարասկզբի՝ Աստվածաշնչի մի քանի մեկնաբանություններ պարզ տրամաբանական բացատրություններ են տալիս մեզ հետաքրքրող մախադասությանը։ Համաձայն մի մեկնաբանության¹՝ սա մի առակ է կամ ասացվածք, որի միջոցով Քրիստոս խոսեց Երկրորդ Գալատյան մասին։ Դիակի առկայության դեպքում նրա շուրջն են հավաք-

¹ A Commentary on the Holy Bible by various writers, edited by the Rev. J. R. Dummelow M. A. Queens' college, Cambridge, complete in one volume with general articles, New York, the Macmillan company, p. 704:

վում արծիվները կամ անգղները²: Այստեղ դիակը չար մարդիկ են, իսկ արծիվները՝ Քրիստոս և Նրա հրեշտակները: Ըստ այս կարծիքի հեղինակների՝ այստեղ կարելի է մահ, կարծես թե մախապիությունից ելնելով, մեկ այլ իմաստով էլ հասկանալ. ովքեր այս ավետարանական հատվածում ակնարկ են տեսնում Երուսաղեմի անկման վերաբերյալ, ըստ մրանց դիակը խորհրդանշում է հրեաներին, իսկ արծիվները՝ հռոմեական բանակը³: Հավանաբար այդ բացատրությունը հիմնված է այն իրողության վրա, որ մախիկնում արծիվի մշանը պատկերված էր պարսկական և հռոմեական դրոշմերին:

Համամամ մեկ այլ բացատրությամբ արծիվները խորհրդանշում են հուդայիզմի մեխող դիակի վրա հարձակվող հռոմեացիների⁴: Մեկ այլ աշխատությունում էլ այն միտքն է հայտնվում, որ Քրիստոս ժամանակի այս ասացվածքին տալիս է մոր իմաստ, ըստ որի Ռատաստանը տեղի կունենա իր ժամանակին: Այստեղ ասվում է, որ ավելի մախընտրելի է դիակի մոտ հավաքվող թռչուններին անգղներ անվանելը, որովհետև անգղներն ավելի շատ են դիակների մոտ հավաքվում, քան արծիվները: Այս բացատրության մեջ մշվում է, որ Ավետարանի տվյալ մախապատությունը չի կարելի փոխաբերական իմաստով հասկանալ, քանզի երբեմն տեսություններ են առաջ քաշվել, ըստ որոնց մարմինը Քրիստոսն է խաչի վրա, իսկ անգղները՝ սրբերը, որոնք հավաքվում են Նրա շուրջը⁵: Թե ինչի վրա է հիմնված մեծագույնը, պարզ չէ, սակայն եթե, ինչպես մշվում է մեծ աշխատություններում, անգղները խորհրդանշում են մահ Քրիստոսին և Նրա հրեշտակներին, ապա հենց միայն սա խոսում է անգղ բառի գործածության դեմ, ինչը ցույց կտրվի ստորև: Այս կարծիքի հիմնավորմանը մեծապես մպաստում է մահ Հորի գրքի համապատասխան հատվածը:

ԱՆԳՂԸ ԵՎ ԱՐԾԻՎԸ ՀՈՐԻ ԳՐՔՈՒՄ

Հորի գրքի ԼԹ գլխի 27-30 համարները կարծես թե մախատիպն են Մատթեոսի և Ղուկասի Ավետարանների համապատասխան հատվածի: Ահա մշյալ համարների մախապատությունները. «Կամ թե քո՞ հրամանալ վերանայ արծուի, եւ անկղ ի վերայ բունդ իւրոյ մստեալ դադարիցէ ի քարանձաւս վիմաց եւ ի ծածուկս. Անդ կայ եւ խնդրէ զկերակուր: Ի

² Անգղ բառի հոգնակին ավելի ճիշտ է կազմել եր և ոչ թե մեր վերջավորությամբ, սակայն այստեղ օգտագործել ենք ավելի տարածված անգղներ ձևը:

³ Այս մասին տես մահ՝ A New Commentary on Holy Scripture, including the apocrypha, edited by Charles Gore, Henry Leighton Goudge, Alfred Guillaume, London, Society for promoting christian knowledge, Northumbreland avenu, W.C.2, p. 192.

⁴ The New Bible Commentary Revised, edited by D. Guthrie BD, MTH, PHD lecturer in New Testament, London, Bible College, J. A. Motger MA, BD principal of Trinity College, Bristol, consulting editors A.M. Stibbs MA formerly Vice-Principal, Oak Hill Theological College, London, D. J. Wiseman OBE, MA, DLIT, FBA, FSA professor of Assyriology, University of London, Inter-Varsity Press, p. 845.

⁵ The interpreter's Bible, The Holy Scriptures in the King James and revised standard versions with general articles and introduction, exegesis, exposition for each book of the Bible, in twelve volumes, volume VIII, New York Abingdon Press Nashville, p. 305.

The interpreter's Bible, volume VII, p. 549.

հետաստանէ դիտեն աչք իր: Եւ ձագը նորա արեամբ թաթախին. ուր ուրեք իցէ զէշ՝ անդ վաղվաղակի գտանքին⁶: Սակայն հայերեն տարբեր հրատարակություններում 27 և 28 հաւարձերը տարբեր ձևերով են ներկայացված: Մի մասում խոսքը վերաբերում է միայն մարմնը տարբեր ձևերով են ներկայացված: Մի մասում խոսքը վերաբերում է միայն մարմնին, և այստեղ բացակայում է *անգղ* բառը, իսկ մյուս մասում՝ այս համարներում, խոսքը վերաբերում է երկու թռչունների՝ արծվի և անգղի մասին, ըստ որում, եթե առաջին տարբերակում վրա ձագերը զոհի արյան մեջ են թաթախված՝ նախադասությունը մեզ ասում է, որ խոսքն անգղի ձագերի մասին է: Իսկ հակառակ տարբերակում, քանի որ *անգղ* բառը բացակայում է, ձագերն արդեն պատկանում են արծվին: Հորի գրքի այս հատվածում *անգղ* և *արծիվ* բառերը միասին գործածված են ոչ միայն Արևելահայերեն նոր թարգմանությամբ Աստվածաշնչում⁶, այլև Ոսկան Երևանցու կողմից Ամստերդամում Աստվածաշնչի առաջին հայերեն հրատարակությունում⁷: Մեր հայերեն հրատարակություններում երկու տարբերակներն էլ հաճախ են հանդիպում:

Ֆրանսերեն հրատարակություններում այսպիսի երևույթ չկա. դրանցում կա՛մ *անգղ*⁸, կա՛մ էլ միայն *արծիվ* բառն է⁹, և հետևաբար, հաջորդող նախադասություններում պատմվող գործողությունները, ինչպես նաև ձագերը հստակորեն վերագրվում են միայն մեկ թռչունին: Այսպես է նաև անգլերեն¹⁰ և ռուսերեն հրատարակություններում, ուստի կարելի է եզրակացնել, որ տարբեր խմբագրություններում այս հատվածը երկու տեսակի է. մի դեպքում ճշվում է միայն արծիվը, իսկ մյուս դեպքում՝ արծիվը և անգղը միասին: Բայց դա

⁶ ԱՍՏՈՒԱԾԱՌՈՒՆԵՆԶ ՄԱՏԵԱՆ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ, ԱՐԵՒԵԼԱՀԱՅԵՐԷՆ ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ, Հրատարակություն Հայաստանի Աստվածաշնչային Հանձնարարության, ՄԱԹՐ ԱԹՈՒՆ Ս. ԷԶՄԻԱՍԻՆ, 1994 – ՌԵՆԽ:

⁷ Աստուածաշունչ Հնոց և Նորոց Կտակարանաց, ներ պարունակող շարակարգությամբ նախնացն մեքոց և ճշմարտասիրաց Թարգմանչաց: Իսկ զկնի վեհափառ Տեառն Յակօբայ Հայոց Կաթողիկոսի զխակարգեալ և տնտեսալ ըստ Դաղմատացոցն. նա և զհամաձայնութիւն հանուրց գրոց Աստուածաշնչից ընդ իրեարս աղընթեր կարգեալ ամենեցուն. նուստի ումենն քանի Տեառն սպասաւորի Ոսկանի Երևանցոյ. յԱմստերդամ: Ներ Տպարանում Սրբոյն Էջմիածնի. և Սրբոյն Սարգսի գորավարի, ի թոտում Փրկչին. 1666, իսկ Հայոց ՌԺԺԵ. յամսեանն մարտի մետասանի:

⁸ La Bible, Ancien et Nouveau Testament, avec les Livres Deutérocanoniques, traduite de l'hébreu et du grec en français courant, Alliance Biblique Universelle, Société biblique française, 1990.

⁹ La Sainte Bible qui comprend l'Ancien et le Nouveau Testament, traduite sur les textes originaux hébreu et grec par Louis Segond docteur en théologie, Nouvelle édition revue, Paris, 58; Rue de Clichy; 58, 1931 (այստեղ մեզ հետաքրքրող հատվածը զետեղված է 30-33 համարներում).

La Bible, traduite du textes original par les membres du Rabbinat français sous la direction de Zadoc Kahn Grand Rabbin, Paris, Librairie Colobo, 3 rue Richer, 5733, MCMLXXIII.

La Sainte Bible, traduite en français sous la direction de l'école biblique de Jérusalem, M. CM. LV., le club français du livre.

¹⁰ Նշենք դրանցից երկուսը.

New American Standard Bible, study edition, Thomas Nelson publishing, Nashville.

Holy Bible, Good News Colour reference edition.

հիմք չի տալիս հաջորդող նախադասություններն ամբողջությամբ վերագրել անգղիին: Գիտենք, որ գրաբարում հաճախ նախադասության մեջ ենթական չի նշվում կամ էլ միայն մի դերանուն է դրվում և հաջորդող նախադասություններում արդեն պետք է ըստ մտքի եզրակացնել, թե այն ում է վերաբերում, իսկ աշխարհաբար թարգմանելու դեպքում էլ կարելի է նույնիսկ ըստ մտքի ավելացնել տվյալ ենթական: Հորի գրքի այս հատվածում՝ 27-րդ համարում, խոսվում է արծվի մասին, իսկ 28-ում՝ անգղի: Գրաբար Աստվածաշնչում հաջորդող նախադասություններում, ենթական բացակայում է, և պետք է կոահել, թե ստորոգյալն ում է վերաբերում՝ անգղի¹¹, թե՞ արծվին:

Հայերեն Աստվածաշնչի տարբեր հրատարակությունների տիտղոսաթերթերը նշում են, որ թարգմանությունները կատարված են հունարեն և եբրայերեն բնագրերից: Հունարեն նոր հրատարակությամբ Աստվածաշնչում՝ այս հատվածում, գործածված է միայն *ὁ αετός* - արծիվ բառը¹¹: Հին Կտակարանից որևէ տող և բառ ստուգելու համար առավել հուսալի է, իհարկե, եբրայական բնագիրը, քանի որ հենց այդ լեզվով էլ գրվել է Հին Կտակարանը: Հրեա ուսուցիչները, որոնք ծայրահեղ նախաձեռնողի են Սուրբ Գրքի հանդեպ, Հին Կտակարանը բնագրից թարգմանել են ֆրանսերեն, և այստեղ՝ մեզ հետաքրքրող հատվածում, գործածված է միայն *արծիվ* բառը: Եվ շեշտելու նպատակով, որ 30-րդ համարում հիշվող ձագերը պատկանում են արծվին, նրանք օգտագործել են *արծվի ձագեր* - *aiglons* բառը, որը ծագում է *արծիվ* - *aigle* բառից¹²: Ի տարբերություն մեր աշխարհաբար Աստվածաշնչի, որտեղ 30-րդ համարում միայն *ձագեր* բառն է, անգլերեն Աստվածաշնչում շեշտված է *արծվի ձագեր* կապակցությունը (the young eagles drink the blood)¹³: Սա հիմնավորում է նաև այն դիպուկ դիտարկումը, ըստ որի, Հորի գրքում կենդանական աշխարհի երևույթներն սկսվում են կենդանիների թագավորի (ԼԹ 39) և ավարտվում թռչունների արքայի նկարագրությամբ¹⁴: Հետևաբար Հորի գրքում ևս շեշտվում է դիակի շուրջը հավաքվող արծիվների և ոչ թե անգղների մասին:

ԱՐԾՎԻ ԵՎ ԱՆԳՂԻ ՎԵՍԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանում»¹⁵ արծվի հատկություններից թվարկվում է՝ սրատես, ուժեղ մագիլներով, «որ ոյծի և քաջութեան պատճառով կոչվում է թռչունների թագաւոր (Aquila)»: Այստեղ նշվում է նաև, որ արծիվը սրատես է, հափը շտակում է մանր կենդանիներ, երբեմն նաև՝ երեխաներ: Սրան հակառակ՝ անգղի ճան-

¹¹ ΤΑ ΙΕΡΑ ΓΡΑΜΜΑΤΑ ΜΕΤΑΦΡΑΣΘΕΝΤΑ ΕΚ ΤΩΝΘΕΙΩΝ ΑΡΧΕΤΥΠΩΝ, ΒΙΒΛΙΚΗ ΕΤΑΙΡΙΑ ΟΔΟΣ ΕΜΜ. ΜΙΤΕΝΑΧΗ 50, ΑΘΗΝΑ, էջ 511:

¹² La Bible, traduite du textes original par les membres du Rabbinat français sous la direction de Zadoc Kahn Grand Rabbin, Paris, Librairie Colobo, 3 rue Richer, 5733, MCMLXXIII.

¹³ Good News Bible, the Bible in today's english version, American Bible Society, New York.

Holy Bible, Good News Colour reference edition.

¹⁴ Толковая Библия или комментарий на все книги Св. Писания Ветхаго и Нового Завета, томъ 1. Съ иллюстраціями. Издание преемников А. П. Лопухина. Томъ четвертый. Книги: Иова, Псалтирь и книга притчей соломоновыхъ, Петербургъ. Безплатное приложение къ журналу "Страпникъ" за 1907 годъ, 1907, ст. 113.

¹⁵ Հատոր Ա, Ա - Ե, Հայկական ՍՍԻՒ Պետական հրատարակչություն, Երևան, 1944, էջ 270:

կերը մեծ են, թույլ և կարճ ճիրաններով, որոնք պիտանի չեն որսը բռնելու և պահելու համար¹⁶։ Բացի դրանից, անգղը երկչոտ է, ուստի մախընտրում է դիակներով կերակրվել, քան թե կենդանիների վրա հարձակվել, և չափազանց որկրամոլ է¹⁷, միմյնեռ արծիվները շատ հազվադեպ են լեշերով սնվում¹⁸։

Արծիվի և անգղի միսը մյուս բոլոր հաիշտակիչ թռչունների պես պիղծ էր հրեաների համար (Ղևտ. ԺԱ 13-14), սակայն արծիվը գուցե տարբերվում էր սրանց միջից, որովհետև «ոչ ոք երբեք կուտեր զայն [արծիվի միսը], բայց եթե ի դիպուածի հարկատուութեան»¹⁹։ Եվ եթե, ըստ վերոնշյալ մի մեկնության, արծիվները խորհրդանշում են Քրիստոսին և Նրա հրեշտակներին²⁰, ապա այս դեպքում պատշաճ է միմիայն *արծիվ* բառի գործածումը՝ իբրև ապացույց Քրիստոսին վայելող արքայական պաշտվի և համարձակության։

ՄԱՐՄԻՆ ԵՎ ԴԻՄԿ

Ավետարանական հատվածում փոփոխությունների է ենթարկվել նաև Ղուկասի Ավետարանի համապատասխան մատնադատությունը։ Խոսքը վերաբերում է *մարմին* բառին, որի փոխարեն Մատթեոսի Ավետարանն ունի *գեշ-դիակ* բառը։ 989 թվականի ձեռագիր Ավետարանում մատնադատությունն այս տեսքով է. «Որ *մարմին* է, անդ արծուիք ժողովեցին»²¹։ Մի չնչին տարբերությամբ այն նույն ձևով է նաև 1666 թ. հրատարակված առաջին տպագիր հայալեզու Աստվածաշնչում (*անդ-ի փոխարեն անդր*)։ Որոշ մոր թարգմանություններ արծիվների անգղ դարձնելու հետ մեկտեղ, մարմինն էլ դիակ են դարձրել (ֆրանսերենում *cadavre*)²² կամ *մարմին* բառի կողքին ավելացրել են *մեռած* բառը (անգլերենում *dead body*)²³։

Սակայն, ինչպես կտեսնենք, Ղուկասի Ավետարանում ճիշտ և մատնական ձևով պահպանված է *մարմին* բառը։

¹⁶ Հայկական Սովետական Հանրագիտարան, հատոր Ա, Երևան, 1974, էջ 384։

¹⁷ Ստ. Մալխասյանց, *ԳԶՎ. աշխ.*, էջ 101։

¹⁸ Հայկական Սովետական Հանրագիտարան, հատոր Բ, Երևան, 1976, էջ 70։

¹⁹ Աստվածաշնչի բառարան, էջ 70։

²⁰ A Commentary on the Holy Bible, p. 704.

²¹ L'Evangile Arménien, édition phototypique du manuscrit N° 229 de la bibliothèque d'Etchmiadzin, publiée sous les auspices de M. Léon Mantacheff par Frédéric Macler, professeur à l'école nationale des langues orientales vivantes, Paris, librairie Paul Geuthner, 13, rue Jacob (VI*), 1920.

²² Աստվածաշունչ Նոր Կտակարան Հիսուս Քրիստոսի, աշխարհաբար մոր թարգմանություն, Հայաստանի Աստվածաշնչի ընկերություն, Երևան, 2001։

Ավետարան, Հայաստանի Աստվածաշնչի ընկերություն, Երևան, 2001։

La Bible, Ancien et Nouveau Testament, avec les Livres Deutérocanoniques, traduite de l'hébreu et du grec en français courant, Alliance Biblique Universelle, Société biblique française, 1990.

²³ Good News Bible, the Bible in today's english version, American Bible Society, New York.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՆԵՂՆԱԿԵՐԻ ՄԵԿԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԱՐԾՎԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սուրբ Եփրեմ Ասորու մեկնության համաձայն՝ ավետարանական այս հատվածում (Մատթ. ԻԱ, 28) Քրիստոս արծիվներ կոչեց թշնամիներին, ովքեր հարձակվելու են Երուսաղեմի վրա, որն անվանվում է դիակ: Այսպես է ասվում նաև մարգարեության մեջ. «Նրա երիվարներն ավելի արագընթաց են, քան արծիվները» (Երեմ. Դ, 13): Եկեղեցական հեղինակը ճշում է նաև, որ ոմանք սա հասկանում են մարմնի և հոգու, ինչպես նաև աշխարհի վախճանի վերաբերյալ²⁴: Եփրեմ Ասորու մեկնությունը, բացի մարմնի և հոգու մասին ակնարկից, մնան է վերոնշյալ մեկնություններին: Այստեղ ևս ակնհայտորեն երևում է, որ եկեղեցական Հայրը Ավետարանի այս մասում ճիշտ է համարել *արծիվ* բառի գործածությունը, մանավանդ որ այն համեմատել է Երեմիայի մարգարեության մեջ հիշվող արծիվների հետ:

Օտա զեղեցիկ և խորհրդաբանական մեկնություն է տալիս Սուրբ Ստեփանոս Սյունեցին: Քրիստոս այստեղ «դիակ» և «ընկած» անվանեց իր մարմինը, քանի որ չարչարվեց և մեռավ, իսկ արծիվներ անվանեց իրեն հավատացողներին, ովքեր արքայապալել և արժանավորապես կերակրվում են Նրանից²⁵: Սյունեցին ևս, ուշադրություն հրավիրելով երկու թռչունների՝ արծիվի և անգղի յուրահատկությունների վրա, շեշտում է, որ Քրիստոս հենց արծիվների անվանեց իրեն հավատացողներին և ոչ թե ագռավներ կամ անգղեր, քանի որ արծիվը պատրաստ որս և մեռած մարմին ուտելը արժանի չի համարում, այլ ինքն է վաստակում և կերակրվում²⁶: Իսկ *դիակ* բառին անդրադառնալով՝ Սյունեցին ճշում է. «Նաև այս պետք է գիտենալ, որ հունարենում չի ասում *դիակ*, այլ *ընկած*»²⁷:

Եթե Ստեփանոս Սյունեցու մեկնությամբ դիակը և մարմինը խորհրդանշում են Քրիստոսին, ապա առավել ևս հասկանալի է դառնում խորհրդաբանական իմաստով արծիվ գործածությունն այս համարում: Քրիստոս Խաչի վրա, ինչպես նաև Սրբազան Պատարագի խորհրդավոր արարողության ընթացքում մեռնում է, բայց և մինևույն ժամանակ կենդանի է իր աստվածությամբ, որը և ցույց են տալիս միմյանց լրացնող *դիակ* և *մարմին* բառերը: Ահա այս իմաստով ընդունելի չէ Ղուկասի Ավետարանում *մարմին* բառի կողքին տրամաբանությամբ ավելացնել *մեռած* բառը: Եվ այս դեպքում առավել քան տեղին է *արծիվ* բառի գործածությունը, որովհետև արծիվը կենդանի արարած է նախընտրում ուտելու համար, բայց և մինևույն ժամանակ կարող է կերակրվել նաև դիակով:

²⁴ Святый Ефремъ Сирійъ, Творения, томъ 8, издание Свято-Троицкой Лавры, издательство «Огний дом», 1995, ст. 275.

²⁵ Ստեփանոս Սյունեցի, 2որս Ավետարանների համառոտ մեկնությունը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1997, էջ 106:

²⁶ Ստեփանոս Սյունեցի, ճշվ. աշխ., էջ 106:

²⁷ Նշենք, որ հունարեն Աստվածաշնչում (ΤΑ ΙΕΡΑ ΓΡΑΜΜΑΤΑ ΜΕΤΑΦΡΑΣΘΕΝΤΑ ΕΚ ΤΩΝΘΕΙΩΝ ΑΡΧΕΤΥΠΩΝ, ΒΙΒΛΙΚΗ ΕΤΑΙΡΙΑ ΟΔΟΣ ΕΜΜ. ΜΠΕΝΑΚΗ 50, ΑΘΗΝΑ) և Նեսքլե-Ալանդի մոր հրատարակությամբ հունարեն Ավետարաններում Մատթեոսի Ավետարանի ԻԱ 28-ում գործածված է *σῶμα-դիակ* բառը, իսկ Ղուկասի Ավետարանի համապատասխան հատվածում՝ *σῶμα-մարմին* բառը (Nestle – Aland, Novum Testamentum Graece, Deutsche Bibelgesellschaft Stuttgart):

Փոփոխված ձևով հրատարակությունները (չնայած որ այստեղ այս կամ այն դավաճանքի օգտին գիտակցական ինչ-որ քայլեր չենք ցանկանում տեսնել) գուցե ձեռնառու են այն «եկեղեցիներին», որոնք մերժում են Քրիստոսի ավանդած Նրա կենարար Մարմնի և այն «եկեղեցիներին», որոնք մերժում են Քրիստոսի ավանդած Նրա կենարար Մարմնի և իրենց հետևորդներին զրկում են Սուրբ Հաղորդությունից: Այսպիսի հրատարակությունները գուցե ձեռնառու են նաև քաղկեդոնականությանը հետևողներին, որոնց համար ոչ մի արտաոց բան չկա Ղուկասի Ավետարանում *մարմին* բառի կողքին նաև *մեծ* որոշիչը դնելու կամ էլ այն ընդհանրապես *դիակ* ձևով արտահայտելու մեջ նույնիսկ այն դեպքում, եթե բոլորի համար հստակ լինի, որ Քրիստոսն այստեղ նկատի ունի իր մարմինը²⁸: Սակայն Հայ Առաքելական եկեղեցու և ընդհանրապես ճշմարիտ իմաստով միաբնակությունը հաստատող եկեղեցիների համար այս դեպքում սա վարդապետական շեղման տանող ճանապարհ կարող է լինել, որն ավելի լավ հասկանալուն օգնում է Քրիստոսի մահվան վերաբերյալ Հայ Առաքելական եկեղեցու ըմբռնումները:

ՆԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՏԵՄԱԿԵՏԸ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՀՎԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ողջ մարդկության պատմության մեջ ամենահուզիչ, ողբերգական և միևնույն ժամանակ անգերազանցելի և ամենափառավոր իրադարձությունը Քրիստոսի խաչելությունն է: Տիրոջ խաչելությունը հանուն մարդկության փրկության ցույց տվեց Նրա սիրո անսահմանությունը յուրաքանչյուր մարդու հանդեպ: Քրիստոս Աստված սիրով մարդկային բնություն և մարմին առավ մեր փրկության համար, մինչդեռ, օրինակ, մեծ փիլիսոփաներից Պլոտինի մասին պատմում են, որ նա, մեր բնությունն ունենալով, ամաչում էր, որ գտնվում է մարդկային մարմնի մեջ²⁹: Բայց ո՞վ էր խաչի վրա չարչարվող և հոգու խորքերից առ Աստված աղաղակողը: Այս հարցը գուցե զարմանալի թվա, որովհետև գիտենք, որ խաչեցյալն Աստծո միածին Որդին էր՝ Հիսուս Քրիստոս: Քրիստոս, որ ճշմարիտ Աստված էր, մարդեղացավ՝ դառնալով նաև ճշմարիտ մարդ: Ումանք, սակայն, սա նկատի ունենալով, ասում էին, որ խաչի վրա չարչարվեց և մեռավ միայն Քրիստոս մարդը: Քանի որ նման կարծիքների տարածումը մեծապես ազդում էր քրիստոնյաների աստվածըմբռնողության վրա, ապա անհրաժեշտություն առաջացավ ամրագրելու ճշմարտությունը վարդապետական հիմնավորումների ձևով:

Այսպիսին է Հայ Առաքելական եկեղեցու դավանությունը. «խաչեալ եւ մեռեալ մարմնովն, եւ կենդանի Աստուածութեամբն. մարմինն եղեալ ի գերեզմանի միաւորեալ Աստուածութեամբն եւ Հոգւովն իջեալ ի դժոխս անբաժանելի Աստուածութեամբն»³⁰:

²⁸ Օրինակ՝ Աստվածաշնչի ոուներեն հրատարակությունները, չնայած կարծես ամեն տողում դրսևորվող իրենց նախաձեռնողության, Ղուկասի Ավետարանի *մարմին* բառի ճշմանկությունն արտահայտել են միայն *դիակ- քրոս* ձևով:

²⁹ Դավիթ Անհաղթ, Երկեր, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունը՝ Ս. Ս. Արևշատյանի, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1980, էջ 140:

³⁰ Ժամակարգություն Հայաստանաց Սուրբ եկեղեցու յորում պարունակին Սաղմոս Դավթի, Ժամագիրք Առնեմի եւ Տօնացոյց, Զ տպագրութիւն (Նմանատպութիւն 1915 թ. Դ տպագրութիւնից), ի վնդարշապատ, ի տպարանի Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, ՌՆՍԸ=1448, 1999, էջ 178:

Նրանք, ովքեր համաձայն չեն մեր Եկեղեցու տեսակետին, ասում են, թե Աստված Բանը անհաղորդ էր չարչարանքներին և «Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս» խոսքերը Քրիստոսի մարդկությունն ասաց իր աստվածությանը³¹: Սրան մնան է մահ Նեստորի ուսմունքը, ըստ որի, Քրիստոսի մարդկությունն է չարչարվել, մինչդեռ հակառակ ծայրահեղության է հասել Եվտիքեսի կարծիքը, որի համաձայն Աստված է չարչարվել: Այսինքն՝ այս բոլոր դեպքերում էլ տարբեր բաժանումներ ենք տեսնում, մի երևույթ, որը մերժելի է եղել Հայ Եկեղեցու կողմից բոլոր դարերում: Մի շարք մեկնությունների համաձայն՝ Քրիստոս խաչի վրա արտասանեց 21-րդ սաղմոսի խոսքերը (1), բայց ոչ ոք վարդապետական վստահությամբ չի կարող ասել, թե Նա ինչ մկատի ուներ այս խոսքերն ասելիս³²: Մեկ այլ մեկնություն, սակայն, այս մույնն ասելով՝ ակնարկ է անում, որ այդ բաները Հիսուսի մարդկային բնության ճիշտ են³³: Այս պարագային տեղին է մշտել, որ Ս. Գրիգոր Սքանչելագործը, անդրադառնալով Եկեղեցու հավատամքին, ասում է. «Եթե ոք ասիցէ մարդ կատարեալ զՔրիստոս, բաժանելով զԱստուած Բան և ո՛չ խոստովանի մի Տէր զՅիսուս Քրիստոս, որպէս և գրեալ է, եղիցի՝ մոլորեալ»³⁴: Նույնպէս և Սուրբ Կյուրեղը մերկայացնում է Ուղղափառ Եկեղեցու Հավատամքը, որտեղ մշտում է. «...վասն մերոյ փրկութեան ... մարդացաւ, մեռաւ և յարեաւ»³⁵:

ՆՈՐԿՏԱԿԱՐԱՆՑԱՆ ՄԵԶԲԵՐՈՒՄՆԵՐ - Ղազար Զահկեցին իր աստվածաբանական աշխատության մեջ բերում է մի շարք մորկոտակարանյան համարներ, որոնք հակառակ են վերը հիշված կարծիքին: Մատթեոսի Ավետարանում (ԻԸ 5) հրեշտակն ասում է. «... զիտեմ, որ փնտրում եք Հիսուսին, որ խաչվեց, այստեղ չէ Նա, քանի որ հարություն առավ»: Զահկեցին մշտում է, որ եթե հարություն առնողն Աստված է, ուրեմն մահ խաչեցյալն է Աստված: Ահա մորկոտակարանյան մեկ այլ հիմնավորում. Կորնթացիներին ուղղված առաջին թղթում (Բ 8) Պողոս առաքյալը մշտում է, որ փառքի Տիրոջը խաչը հանեցին: Այս խոսքերը լրացնում է Հակոբոս առաքյալը՝ ասելով. «...աչառությամբ մի՛ պահեք մեր Տէր Հիսուս Քրիստոսի՝ փառքի Տիրոջ հավատը» (Հակ. Բ 1): «Առանց աստվածության սոսկ մարդը չի կարող փառքի տեր լինել», - եզրակացնում է Զահկեցին³⁶:

Նույնկերպ մահ Գրիգոր Սքանչելագործն է մշտում, որ Տերը ոչ թե մարդուն մատնեց [չարչարանքների ու մահվան] մեզ համար, այլ իրեն մատնեց համուն մեզ, ինչպէս և Քրիստոս ինքն է ասում. «Քանդեցե՛ք այդ տաճարը և երեք օրվա ընթացքում այն կվերականգնեմ» (Հովհ. Բ 8)՝ մկատի ունենալով իր մարմինը³⁷: Քրիստոս ինքն ասաց, որ մարդու Որդին պետք է մատնվի խաչի (Մատթ. ԻԶ 45): Ավելի խոսում են Ղուկասի Ավետա-

³¹ Ղազար Զահկեցի, Աստուածաբանական Դրախտ Ցանկալի, վերադրեալ ի տպարանի Սրբոց Յակոբեանց, Երուսաղէմ, 2002, էջ 239:

³² The interpreter's Bible, volume VII, p. 607.

³³ A Commentary on the Holy Bible, p. 718.

³⁴ Կնիք հաւատոյ Ընդհանոր Սուրբ Եկեղեցոյ յուղղափառ և հոգեկիր Հարցն մերոց դաւանողաց, յաւուրս Կոմիտասի Կաթողիկոսի համահասարեալ, հրատարակութիւն Կարապետ Եպիսկոպոսի, ծախիւք Յովհաննոս Ծապրճիկեանց Նոր-Նախիջևանցոյ, Ս. Էջմիածին, տպարան Մայր Աթոռոյ, 1914, էջ 73:

³⁵ Սահակ-Մեսրոպյան մատենադարան, Ե, Գիրք թղթոց, մատենագրութիւն մախմեաց, (Թուղթ Կիրողի առ Նեստոր), Թիֆլիս, տպարան Տ. Ռօտինեանց եւ Մ. Ծարամէ, 1901, էջ 398:

³⁶ Ղազար Զահկեցի, մշվ. աշխ., էջ 246:

³⁷ Կնիք հաւատոյ, էջ 75-76:

րանի հետևյալ համարները, որոնցում հարություն առած Քրիստոս բացատրում է իր աշակերտներին. «2Է՝ որ Քրիստոս պետք է մույն այդ չարչարանքները կրեր և այնպես մտներ փառքի մեջ» (Ի Դ 26)³⁸:

Բոլոր այս հատվածներում առավել քան ակնհայտ է, որ մի փոքր ակնարկ անգամ չկա բաժանումների: Ղազար Ջահկեցին իրավամբ ասում է, որ Հայ Եկեղեցին չի ասում սուկ Աստված մեղայ կամ սուկ մարմինը խաչյալ, այլ Քրիստոսին ընդունում է կատարյալ կերպով և բաժանումներ չի անում³⁹: Այս մույն կարծիքը հաստատում է նաև Պետրոս առաքյալը՝ ասելով. «Քանի որ Քրիստոս մարմնով չարչարվեց մեզ համար» (Ա Պետ. Դ 1):

Ի հեղբունք քաղկեդոնական բաժանման, ըստ որի Աստված Բանը անհաղորդ էր «կրից չարչարանաց», բերենք նաև համարներ Հայտնության Գրքից՝ «Ես եմ, որ մեռա» (Ա 18), «Անկիզբը և Անվախճանը, որ մեռավ և կենդանացավ» (Բ 8), «...մորթվեցիր և զնեցիր մեզ Քո արյունով» (Ե 9), իսկ Պողոս առաքյալը դարձյալ ասում է. «...հաշտվեցինք Աստծու հետ Նրա Որդու մահվամբ» (Հռոմ. Ե 10)⁴⁰:

Բուժված կույրը հարցնում է Քրիստոսին, թե՞ ո՞վ է Աստծու Որդին, որ հավատալով նրան, որին Քրիստոս պատասխանում է՝ ասելով, թե տեսար նրան և խոսում է քեզ հետ, իսկ սրանք մարմնին են վերաբերում (Հովհ. Թ 35): Նույն կերպ և Թովմաս առաքյալը Քրիստոսի մարմինը տեսնելով և շոշափելով Նրան Տեր և Աստված դավանեց (Հովհ. Ի 24): Միհշ ոմանք ասում են, թե այլ է տեսանելի և շոշափելի բնությունը և այլ է աստվածայինը⁴¹, Ս. Հովհաննես առաքյալը երկուսն էլ միասին է ասում. «Մեր ձեռքերը շոշափեցին կենաց Բանը» (Ա Հովհ. Ա 18):

ՆԶՈՎՔՆԵՐ - Գրիգոր Սքանչելագործի մզովքներում մշվում է, որ եթե մեկն ապի, թե այլ էր, որ չարչարվեց, և այլ էր, որ՝ ոչ, թող մզվյալ լինի⁴²: Նույնպես և Սուրբ Կյուրեղի մզովքներում է մշվում, որ եթե մեկը Հոր հետ մույն բնությունն ունեցող Բանին իր մարմնով հանդերձ մույն Աստվածը չի դավանում, ապա թող մզվյալ լինի⁴³:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ոսկեբերանն ասում է, որ Քրիստոս մեռավ մարդկային բնությամբ, սակայն անմահ մնաց նրան միացած աստվածությամբ⁴⁴: Մեր Եկեղեցու սուրբ հեղինակներից Հովհան Օձնեցին ևս ասում է, որ Քրիստոս է «չարչարելի մարմնով և անչարչարելի աստվածությամբ»⁴⁵: Այսպիսին է նաև Ներսես Շնորհալու կարծիքը. «Եկալ կամատրաբար չարչարանքներու եւ չարչարուեցաւ անչարչարելի» մեր չարչարելի բնութեամբ խաչին վրայ.

³⁸ Ղազար Ջահկեցի, մշվ. աշխ., էջ 250:

³⁹ Նույն տեղում, էջ 254:

⁴⁰ Նույն տեղում, էջ 254, 256:

⁴¹ Նույն տեղում, էջ 182:

⁴² Կնիք հաւատոյ, էջ 73

⁴³ Գիրք Թղթոց էջ 404:

⁴⁴ Ղազար Ջահկեցի, մշվ. աշխ., էջ 148:

⁴⁵ Եզմիկ Մ. Վարդապետ Պետրոսյան, դոկտոր աստվածաբանության, Հայ Եկեղեցու քրիստոսաբանությունը, Ս. Էջմիածին, 1995, էջ 68:

մեռաւ նա, որ մահուան պարտական չէր, մեր մահկանացու մարմինով»⁴⁶։ Ըստ Սուրբ Եփրեմ Ասորու՝ չարչարանքների ժամանակ Քրիստոսի աստվածությունը նահանջեց Քրիստոսի մարդկությունից, բայց ոչ այն աստիճան, որ բաժանվի, այլ այդ նահանջելը դրսևորվում էր նրանով, որ այդ ժամանակ աստվածային հզորությունը չէր արտահայտվում⁴⁷։

Հայաստանյայց Սուրբ Եկեղեցին ևս ասում է, որ անչարչարելին չարչարելիով չարչարվեց, անմահը մահկանացուով մեռավ⁴⁸։ Բայց մեծ պնդումներով արդյո՞ք պատշաճ է ասել, թե Աստված չարչարվեց կամ Աստված մեռավ, և արդյո՞ք այսպիսով չենք դառնում աստվածաչարչարներ։ Սակայն Հայ Առաքելական Եկեղեցին չի ասում, թե խաչվեց աստվածային բնությունը, այլ մեր քրիստոսաբանությամբ՝ խաչվեց Հիսուս Քրիստոս, այսինքն՝ Քրիստոս ամբողջությամբ, առանց բաժանումների։ Հայաստանյայց Եկեղեցին կարծես թե միշտ զգուշացել և զգուշացրել է բաժանումներ անելուց՝ ճշելով, որ դա վտանգավոր է, և կա մի սահման, որից այն կողմ անցնելը կարող է մոլորության տանել։ Բայց ինչպե՞ս հասկանալ «Աստված չարչարեալ» արտահայտությունը։ «Անչարչարելի աստվածությամբ» ասվում է ըստ բնության, իսկ *Աստված չարչարալ*՝ ըստ միավորության⁴⁹։ Միավորությունը Ջահկեցին բացատրում է հետևյալ համեմատությամբ։ Ինչպես հուրը երկաթի հետ միավորվելով վերացնում է նրանից ցրտությունը և սևությունը, այսպես էլ Քրիստոսի մարմինը, միավորված Աստված Բանի հետ, ունի Բանի կարողությունը և աստվածությունը⁵⁰։ Հետևաբար ոչ թե ըստ բնության, այլ ըստ միավորության, *Աստված չարչարեալ* արտահայտությունը ճիշտ է։

Անդրադառնալով ավետարանական վերոնշյալ հատվածների *արծիվ*, *մարմին* և *դիակ* բառերին՝ ճշենք, որ դրանք հին հրատարակություններին կամ վաղ ձեռագրերին հետևելով ճիշտ կերպով անփոփոխ թողնելու դեպքում ևս մեկ հատված ենք պահպանում, որն իր մեջ ամփոփում է նաև հանուն մարդկության Քրիստոսի չարչարանքների և մահվան գեղեցիկ և խորհրդական ակնարկը։ Երբ Պետրոս առաքյալը անպատշաճ համարեց Քրիստոսի չարչարվելն ու մեռնելը, Քրիստոս ասաց նրան. «Ետև՛ս գնա, սատանա, որովհետև քո խորհուրդը Աստծունը չէ, այլ մարդկանցը» (Մատթ. ԺԶ 22-23)։ Եվ մինչ նմանք ամոթ են համարում պարծանքների պարծանքը՝ տերունական խաչը, մենք համարձակությամբ քաղոգենք և երգենք մեր Աստված Քրիստոսի չարչարանքները⁵¹։

⁴⁶ Ընդհանրական թուղթ Ներսես Ծմորհալի կաթողիկոսին Հայոց ուղղուած համայն հայ ժողովուրդին, որուն վերատեսչութիւնը Տիրոջմէ իրեն վստահուեցաւ, արևմտեան հայերեւելի վերածեց Ծմորհր Սրբ. Գալուստեան, Պատրիարք Հայոց Թիւրքիոյ, Մարմարա տպարան, 1973, էջ 19:

⁴⁷ Святой Ефрем Сиринъ, ԶՎ. աշխ., էջ 316-317:

⁴⁸ Հազար Զահկեցի, ԶՎ. աշխ., էջ 259:

⁴⁹ Եզնիկ Ծ. Վարդապետ Պետրոսյան, ԶՎ. աշխ., էջ 68:

⁵⁰ Հազար Զահկեցի, ԶՎ. աշխ., էջ 168:

⁵¹ Նույն տեղում, էջ 251-252: